# Պարույր Սևակ

## Խոսք հավաստիքի

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ծննդյան 1600-ամյակի առթիվ:

«Ոչ միայն որ գործենն պարտական են, այլև որ յանձն առնուն»:

Ա

Քեզ հետ այս պահին գրուցել էր պետք
Միայն նախդրրիվ-ոսկեղենիկով
Եվ պետք էր գրել այն երկաթագիր տառերով միայն,
Որոնց կերպը դու առել ես գուցե
Հին գործիքներից մեր դարբինների
Եվ այն կեռերից ամենատարբեր,
Որոնցից զեն ու զարդ էին կախում...
Բայց Գյուտարարիդ համեմատությամբ
Ես՝ Դանիելյան թերատ այբուբեն,
Ջուրկ յոթնաղողանջ ձայնավորներից,
Չեմ կարող զնգալ
Ու չեմ էլ զնգում,
Այլ պիտի հիմա լոկ բաղաձայնեմ,
Թե պե՞տք է արդյոք, որ Քո անունով
Մտքի մի օջախ կամ մի մայրուղի կոչվի աշխարհում,
Եթե Քո անվամբ մի ամբո՛ղջ ազգ է կոչում ինքն իրեն,
Ա՛զգ,
Որ ապրելու մտադրությամբ մեռել է հաճախ,

Սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել երբե՜ք՝
Թեկուզև մի օր...
Եվ պե՞տք է արդյոք,
Որ արձաններրդ հառնեն աստ ու անդ,
Եթե Ինքրդ Քեզ - քանի՜դար արդեն -
Քանդակում ես միշտ
Մեր մանկաշխարհի պարզ հոգիներին
Երեսուննվեց կերպերով անքանդ:
Պե՞տք է ուրեմրն...
Ու պետք է եթե՝
Քե՛զ... Պետք չէ բնա՜վ,
Պետք է... միայն մե՛զ:
Բ
Դո՛ւ, որ անվարան բնաբարձեցիր կռապաշտներին,
Վերաքննությամբ պիտի մեզ ներես,
Եթե խոսում ենք քանդակ-արձանից,
Չի կան արձաններ, որ կուռք չեն դառնում,
Եվ միաստվածներ կան նոր ու նորեկ,
Որ չեն տարբերվում կռապաշտներից:
Եվ ա՛յն պատճառով պիտի մեզ ներես,
Որ հնուց անտի սովոր լինելով
Հարկի և տուրքի,
Բաժի և սակի
Ու վճարելով միշտ ճարահատյալ,
Մենք հոգով լոկ մե՛կ հարկ ենք ընդունել՝
Հարկը հոգեկա՜ն:
Եվ Դու՝ եզակի մի հարկահավաք,
Որ ընտրված է - ոչ նշանակված,
Ա՛ռ ու մթերի՜ր,
Ա՛ռ ու պաշարի՜ր

Տասնըվեցդարյա հարկը մեր հոգու,
Որպեսզի կրկին վերաբաժանես՝
Մեր նեղ օրերին,
Բայց... իբրև նպաստ
Եվ ոչ մուրածո ողորմաբաժին...
Գ
Աշխարհզբոսիդ համեմատությամբ
Ես մինչև անգամ Արաքս չտեսած տնաբնակըս,
Ի լրո՛ գիտեմ,
Որ քեզ ծին տված բնիկ գավառում
Կար մի մենաստան՝
«Սուրբն Կարապետ»,
Որի դռները փակ էին ընդմիշտ կանանց սեռի դեմ:
Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Սակայն անօրեն մի նոր օրենքով
Փակ է մեր առջև
Ո՛չ միայն դուռն ու գավիթը վանքի,
Այլ գավա՛ռն ամբողջ
Եվ ո՛ղջ մի երկիր,
Որի անունից զրկված է նույնիսկ քարտեզը հիմա:
Մենք կին չենք,
Այր ենք,
Տղամարդ ենք մենք,
Եվ ընդդեմ այս բաց անարդարության
Առայժըմ մենք մեր աչքերն ենք փակում,
Բայց փակում այնպես,
Ինչպես փակում են մարդիկ մատները,
Եվ ստացվում է դրանից... բռունցք:

Ուստի իզուր է խոսքը երդումի:
Բնիկ գավառըդ հենց որ ոտք դնենք՝
Քո Հացեկացը կպեղենք բրչով,
Եվ տարոնական պարզած երկնի տակ
Սրբատաշ վեմը սուրբ թանգարանի ձևակերպ կառնի,
Եվ դա կդառնա Նո՛ր Էջմիածին...
Դ
Սակայն... Եվ սակայն
Կա սուրբ Օշական,
Որ ազգի համար մի շատ վաղեմի
Հավասար է նոր Երուսաղեմի:
Աշուն է հիմա:
Եվ սրբատեղի տանող ծուռումուռ ճանապարհներին
Խաղողի վազն է իր տերևները փռել ամենուր,
Իր տերևները, որ շատ են նման
Անհայտ ձիերի սմբակից պոկված ժանգոտ պայտերի:
Այս հողի վրա օտար սմբակներ չեն դոփում հիմա:
Եվ եթե կաղնու անտառն է սակավ այս հողի վրա,
Ապա խաղողի և կաղնու տերևն իսկապես անչափ նման են իրար:
Գաղտնասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ օշականյան բանուկ այս ճամփով քայլող ամեն ոք
Անխոս-լռելյայն երդում է տալիս
Մի՞շտ զուգաշավիղ ընթանալ Քեզ հետ:
Անձնադատորեն նա հանձն է առնում
Արդյունավորվել մի՛միայն այնպես,
Որ հողագնդի բյուր լեզուներից
Անարտաքսելի մնա հավիտյան
Մեր այն բարբառը,
Որի գրերից կարելի է սուր եղաններ կոել,

Բայց մեխե՛ր նան՝
Գամելու համար հին ու նորօրյա պիղատոսներին:
Կանխասացության համար չեմ ծնվել,
Ես գիտեմ սակայն,
Որ սրբատեղի տանող այս ճամփով քայլող ամեն ոք
Եվ վա՛ղը պիտի դառնա մասնակից
Քո անկշռելի որքանությանը,
Իր հոգում զգա Քո մշտակայուն ներկայությունը,
Քո իսկության հետ ինքն իրեն ձուլի՝
Փոխելով քայլն իր մոլորագրնաց,
Բեռնակիր դառնա մեր բեռ ու բարձին,
Դասալիք լինի բանակից վարձու:
Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք
Ավանդակորույս իրենց վանքի դեմ
Վերստին պիտի աչքերը բանան:
Հայոց աշխարհի այրերից նրանք,
Ովքեր հուլաբար ճամփա են ընկել
Ու դեռ ծուլաբար դեգերում են լուռ՝
Օտար հովերի ապտակին հլու,
Պիտի դառնորեն դարձի գան դարձյալ՝
Խորհե՛ն հայերեն,
Ապրե՛ն հայօրեն...
Ե
Հոռետեսության համար չեմ ծնվել
Եվ դեմ եմ հիմար լավատեսության,
Սակայն շատերից մեկն էլ ես՝ գիտե՛մ.
Դու էիր, որ մեզ անընտգյուտ գյուտովդ ուսուցանեցիր,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար:
Ուստի հավատա, ո՞վ Հնարավոր,
Որ եթե մի օր - աստվա՛ծ չարասցե -

Գտած հնարքդ դառնա գործազուրկ,
Ասպարեզ կիջնի մեկն էլ, անկասկած,
Որ սկիզբ կտա մի նո՛ր սխրանքի:
Թե ճիշտ է, որ Դու հայր ունենալով՝
Չունեցար որդի,
Ճիշտ է առավել,
Որ զավակի տեղ ժառանգներ ունես՝
Սերո՛ւնդ ու սերո՛ւցք,
Որոնք անընտգյուտ գյուտովդ գիտեն,
Որ անհնարին վիճակն է միայն ծնում նոր հնար...
Ենջի՛ր ուրեմն սուրբ շիրիմիդ տակ,
Քանզի արթուն ես մեր հոգիներում:
Չէ՞ որ ինչ-որ տեղ փոքրերս ու Մեծդ
Հավասարվում ենք, դառնում աջակից.
-Դու... գործն ես արել,
Մենք... հանձն ենք առել...

12.IX,1961թ. 17.IX.1961թ.
Երևան